ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ»

Գյուղական բնակավայրերի դպրոցների, մանկապարտեզների ջրագծերի բարեկարգման ծրագրի կարիքների գնահատման հարցաշար

Ուրախ ենք տեղեկացնել, որ ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագիրը մեկնարկում է գյուղական բնակավայրերի դպրոցների և մանկապարտեզների ջրագծերի բարեկարգման համաֆինանսավորման մոդել՝ ուղղված ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի և Արարատի մարզերի գյուղական բնակավայրերի դպրոցների և մանկապարտեզների սպասարկման կենսապայմանների բարելավմանը:

Ծրագրի նպատակն է՝ գյուղական բնակավայրերում գործող դպրոցների, մանկապարտեզների ջրագծերի համակարգերի բարեկարգման միջոցով նպաստել դպրոցների, մանկապարտեզների նվազագույն կենսական կարիքների բավարարմանը:

ՄԱԶԾ ԿՀ-ն կհամաֆինանսավորի 80/20 չափաբաժնով, որտեղ նախագծային արժեքի 80% ներդրումն կիրականացնի ՄԱԶԾ-ն, իսկ 20%-ը՝ համայնքը կամ համայնքի համաձայնությամբ՝ երրորդ կողմը (դպրոց, մանկապարտեզ կամ այլ):

«Կայուն համայնքներ» ծրագիրը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից, իրականացվում ՄԱԶԾ-ի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

«ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ» ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝

- Նախագծի շահառու կարող են հանդիսանալ միայն Կոտայք, Արարատ, Արագածոտն եւ Արմավիր մարզերի գյուղական բնակավայրերի դպրոցները և/կամ մանկապարտեզները:
- Ծրագրին կարող են դիմել համայնքները, գյուղական բնակավայրերը և համայնքի զարգացմամբ հետաքրքրված երրորդ կողմը (մասնավոր ընկերություններ,

անհատներ), որոնք հաջորդիվ պետք է ներկայացնեն համայնքի ղեկավարի գրավոր հաստատումը ծրագրի շրջանակներում անհրաժեշտ աջակցության և շահագործման ծախսերի ֆինանսավորման հնարավորության վերաբերյալ:

- ***Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է առցանց լրացնել***
  - Հայտադիմումը

Հայտադիմումը լրացնելու համար խնդրում ենք հետևել՝ https://form.jotform.com/SustainableCommunities/basic-infrastructure
ՄԱԶԾ պաշտոնական հղմանը:

Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. հուլիս 9-ը ՝ ժամը 18:00-ն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

- Ժամկետանց և ոչ լիարժեք հայտերը չեն դիտարկվելու,
- Ծրագիրը կապ կհաստատի միայն առաջին փուլով ընտրված մասնակիցների հետ:

Հարցերի համար կարող եք գրել susanna.safaryan@undp.org էլ. փոստին: